

մեն անտարբերներու մտածութիւնն , որ իւր խանձարուքն պատուելով եւ յերեւան գաղով արծակ համարձակ կը քարոզուի : Քննեմք ուրեմն ուշադրութեամբ, և ապա անշուշտ կարող

եմք դատել, թէ արդ՛ոք անտարբեր յատկութիւնն իրապէս մի անտարբեր կայութիւն է, թէ ոչ :

(Եւրո-նոյի լէ :

Ծ Ա Ղ Կ Ա Ք Ա Ղ Ա Մ Ե Ր Ի Ք Ա Կ Ա Ն

Հ Ա Ի Ա Ս Ք Ո Վ, Ք Ա Լ Ե Լ Ը

Հիւս Կտակարանին մէջ անձ մի չը կայ՝ որ իմ վրաս այնչափ մեծ նուիրական յարգանք մի տպաւորէ : Երչափ Աբրահամ : Իր ազնուականութեանը փառասան այս էր, « Անիկայ Աստուծոյ բարեկամն էր » : Ստրական կռապաշտութեան մէջ ճնած և մեծցած, Տիրոջը ինքնիշխան կամօքը եւ այնպիսի միջոյններով, որ մեզ անձանօթ են, Աստուծոյ հաւատաց : Անոր վրայ առաջին սորվածնիս, Աստուծոյ զԱբրահամ անակնկալ յանկարծ կոչելն է ըսելով. « Քու երկրէդ և քնն ազգականներէդ և քու հօրդ տունէն ելի՛ր և գնա՛ այն երկիրը զոր քեզ պիտի ցուցնեմ » :

Աբրահամ կը հնարանդի : Անիկա հարցմունքներ չընէր : Իր երթալու օտար երկրին համար աշխարհագրական տախտակ մի կամ առաջնորդող Գիտք մը (Guide) իրեն ցոյց չի տրուիր : Հաւատքով իր ընտանեկան կարավանովը ճամբայ կ'ենէ եւ երկնային Չեռքին առաջնորդութեանը կը հետեւի . . . : Անիկա ճամբայ ելաւ . « Ո՞ւր երթալը չի գիտնալով » :

Ահա այն այս մէկ գեղեցիկ տողին մէջն է, որ ամեն հաւատոյ որդիներուն հոգեւոր պատմութիւնը կը կարդամ : Այս տողը այնպիսի ամենախորին դաս մի, այսինքն Աստուծոյ վրայ այնպիսի

հնազանդ հաւատք մի կը յայտնէ, որ մարդկային սրտին համար, ամենէն հարկաւոր դասն է : Կարձ մէկ վըճռով, հաւատքով քալելը կը նկարագրէ :

Եւ ի՞նչ է այն, միթէ աննպատակ յանդուգն ձեռնարկութիւն մի է : միթէ բաղդովի թափառում մի, ո՛չ, այլ ճիշդ անոր հակառակը : Աստուծոյ ճամբան երթալն է եւ ոչ թէ անձին փափաքած կամ ուզած ճամբան :

Հաւատքով քալելը ճիշդ մեր երկնաւոր Հօրը հետ ձեռք ձեռքի, քայլ ընդ քայլ հարթ կամ խորտուրտ տեղերէ, բլրներու վրայէն կամ վարէն, վայրկեան առ վայրկեան քալելն է, զօրութեամբ կամ լռելեայն հաւատարմութէ . « Բոլոր բարի մտորակներու քայլերը Տիրոջմէ կ'առաջնորդուին » : Պէտք եմ Անոր հրամանին հընազանդելու : Այսօր, այսօրուան գործը պէտք եմ ընել, այսօրուան մէջ ինձ շնորհուած զօրութեամբը կամ կարողութեամբը : Այսօրուան բեռը պէտք եմ կրելու : Իմ պարտաւորութեանս կանանը այս օրուան համար է : « Իմ օրուանս պէտքին համաձայն պիտի ըլլայ իմ զօրութիւնս » : Վաղուան ճամբորդութիւնը, վաղուան աշխատանքը և վաղուան փորձութիւնները

եւ նեղութիւնները մինչեւ վաղուան
գալը պէտք եմ թողուլ : Ձեռքդ ինչ
որ գտնէ ընելու, ընէ՛ թող, և վաղ
ուան համար մի հոգար : Այս հա-
ւատքին առաջին դասն է :

Համարիմք թէ Աբրահամ ամբողջ
գիշերը արթուն մնալով հետեւեալ
օրուան երթալիք ճամբային վրայ սկը-
սէր հոգալ և մտատանջիլ, և առաւօ-
տուն չուզէր և մերժէր քայլ մի ան-
գամ առնելու, մինչեւ որ Աստուած
իրեն Քանանու երկրին ճամբուն աշ-
խարհագրական տախտակ մի չի տար :

Այն ատեն Տէրը այնպիսի ձանձրալի
բեռէն պիտի տաղաւար և պիտի թու-
ղուր որ Ուռ (Ուրֆա) վերագառնայր
Աբրահամ ուր երթալը չք գիտեր
բայց գիտէ, որ Աստուած գիտէ : Ա-
նիկա երկու բանի համար ապահով է.
առաջինն այն է, որ այն ճամբայէն, որ
Աստուած իրեն կ'առաջնորդէ ուղիղ
ճամբան է և երկրորդը թէ այն ճամ-
բան, ապահով ճամբան է : Ահա այս է
ամենը, զորս դուք կամ ես գիտնալու
կրնանք յուսալ :

Ապագան անաշխարհագրուած եր-
կիր մի է . իւրաքանչիւր քայլը բառ
առ բառ դէպ ՚ի մութը քայլ մի է :
Ազգագոյն «Եթէր կնքով կնքուած գիրք
մի է և մէկը չէ կարող զայն քակել » :
Այն դրբին մէջն սրբունակութիւն
ները, մի միայն Աստուծոյ կնիքները
քակած ատենը կը տեսնենք, որ թեր-
թէ թերթ կը դարձնէ, իւրաքանչիւր
թերթը իր ատենինն Անձնատիրութիւ-
նը շատ անգամ կ'անձկայ, որ կնքուած
էջերուն նայուածք մի նետէ . սակայն
հուսալով կը փոխայ . « Ո՛չ, ո՛չ, Աս-
տուծոյ յուսայ » : Այն ողորմութիւն
ները և օրհնութիւնները՝ զորս Աստ-
ուած մեզի համար ստորատառն է
աւելի թիւթիչ և հմայիչ զօրութիւն
մի ունին, երբ ակնկալութեամբ աւ-

րուած չեն : Աստուած չի թողուր, որ
իւր ողորմութիւնները առաջէն զեղ-
ջելով (որոնթօ ընել) ընդունինք :

Սակայն մեր վրայ գալիք նեղու-
թիւնները չի նախատեսելիա, աւելի
լաւ է :

Երբ ջերմ սիրով կապուած երի-
տաստորդ զոյգ մի իրենց հարսանեաց
օրը ձեռք ձեռքի կը տան վառվառն
յուսոյ տղայճառութեան մէջ, անոնց
հոգը չքար երբ ձերագոյն գլուխներ
գուշակութեամբ կ'որորուն և ձերա-
գոյն լեզուներ կը կարկաշտն ըսելով .
« Գուք անուշ առանց դառնութեան
չի պիտի կրնայ ընդունիլ » : Սակայն
նորատունկ զոյգը դառնութիւնն ըն-
դունելու միայն չ'ունի : Ինչո՞ւ անոնց
արեւի պէս սրայճառ ուրախութիւն
ները մթացնեմ ամպ մի յոյց ապալով,
թէ և այն ամպը « Մարդուս ձեռքէն
մեծ ալ եղած չըլլայ » :

Հիւանդ անկողնին քովը հսկելու
համար եւ պարսպ խրճիթին վրայ
ողջալու՝ դեռ բաւական ատեն կոյ :
Կենաց ճամբորդութեան մէջ այս
վշտալի տեսարաններուն պիտի մեր-
ձենան . « Հերիք է օրուան իր նեղու-
թիւնը » . և նմանապէս ուրախու-
թիւնը : Մեր արթութիւնները յա-
ռաջագոյն կազմելը միայն տաքնապ
պիտի աւելցնէ, զանոք կրելու հա-
մար առանց զօրութիւն աւելցնելու :

Կենաց ամենաազնիւ եւ ամենա-
սուրբ ձեռնարկութիւններէն քանի
քանիներ կրնային երբէք սկիզբ չ'ու-
նենալ, եթէ բոլոր գթուարութիւն
ները, անյաջողութիւնները և նեղու-
թիւնները նախատեսուէին Եթէ Պեա-
րոս գնտանը և խաչը յառաջագոյն տես-
նէր, գուցէ իւր ուղկանը այնչափ
չուտով չք պիտի թողուր Քրիստոսի
հետեւելու համար : Եթէ Քրիստոսի
ճառայելու նպատակաւ իբր եկեղեց-

ւոյ սրչտօնեայ համալսարանին կամ
ձեմարանին մէջ ուսանողք իրենց ա-
պագայ պատմութիւնը յառաջագոյն
կարող ըլլան կարգալու, տարակցս
չ'ունիմ որ անոնցմէ շատերը մէկի
պիտի երթան, մէկը իւր կալուածքին,
միւսը իւր վաճառքներուն: « Հետեւէ
Ինձ » կ'ըսէ Տէրը, և ըրած բոլոր խոս-
տումը այս է. « Ահա ես միշտ հետդ
եմ »: Աստուած Ուիլյամ Քորսին (*) չ'ը-
սաւ թէ Խորհրդարանին մէջ քսան
տարի իւր հակառակորդներէն պիտի
յաղթուէր և իւրաքանչիւր քայլին պի-
տի նստատուէր մինչև որ գերեաց
աղատութեան վերջնական յաղթանա-
կը վասակէր: Քրիստոս իւրաքանչիւր
եքիտասորդ հաւատացելոյն սկիզբէն
չք յայտներ անոր հանդիպելիք բոլոր
նեղութիւնները և փորձութիւնները և
և կամ ունենալիք անյաջողութիւննե-
րը: Քրիստոսի բոլոր մեզի ապահով-
ցուցածը այս է. « Իմ շնորհքս քեզի բա-
ւական է »: « Անոր » որ կը յաղթէ, պի-
տի տամ կենաց պատկը »: Արդեօք
ասկէ աւելի բան մը պէտք ենք խնդրել:

Դէպ ՚ի երկինք եղած բոլոր ճամբոր-
դութիւնը հաւատքով քայլելով է: Աս-
տուծոյ մեզմէ բոլոր խնդրածը այս է
« Հնազանդէ և յուսամ »: Մեր խեղճ և
կոյր երկչտութիւնը յաճախ կը տա-
տամսի և կը քրթմնջէ. « Տէր, ճամբան

ինչպէս կրնանք գիտնալ »: Մեր առ-
տուածային առաջնորդը կը պատա-
խանէ. « Ես եմ ճամբան » « Ինձ հետե-
ւէ »: « Ես կոյրն իր չգիտցած ճամ-
բայէն պիտի առաջնորդեմ անոնց առ-
ջև մթութիւնը ըստ պիտի ընեմ »:
Օրհնեալ է այն Հոգին, որ յուսալը և
հնազանդելը սորված է:

Կենաց իրական մրցումը մեր ու-
զած ճամբան քայլելուն և Աստուծոյ
ուզած ճամբան քայլելուն մէջն է: Մե-
ղաւորին մեղքը ճիշդ ասոր մէջն է:
Մեղաւորը իրեն էն հաճելի երեւցած
ճամբայէն կը քայլէ, որուն ծայրը դը-
ժոխքն է. . . . : Նոյն խի Գրիստոնե-
այք շատ անգամ սոսկալի կերպիւ կա-
մապաշտ ըլլալու կը փորձուին: Ղովա-
իւր ուզած ճամբան ընտրեց. այն ճամ-
բան զինքը Սողոմ առաջնորդեց: Երբ-
որ Աստուծոյ առաջնորդութեանը հե-
տեւեցաւ, Զօար առաջնորդուեցաւ
և ապահովեցաւ: Յովնան իւր ուզած
ճամբան ընտրեց և զինքը նաւէն դուրս
փութորկալից ծովը նետել տուաւ, ետ-
քէն Աստուծոյ ճամբուն հետեւեցաւ
և սիրոյ առաքելութեամբ մի Նինուէ
առաջնորդուեցաւ: Պետրոս զինքը հա-
գալու ջանաց և ստախօս և վատ մի
դարձաւ, ետքէն թող տուաւ որ Աս-
տուած զինքը հոգայ և հանդարտու-
թեամբ եւ խաղաղութեամբ բանար
ննջելու երթալով, աղատութեան հը-
րեշտակէ մը արթնեցաւ: Ընթերցող,
միշտ չէս մի տեսամ, որ աւելի հաւատ-
քով սնած առնեդ ամենաքաղցր խա-
ղաղութիւն մի վայելած ես:

Խորհրդածութիւն մի եւս. « Ար-
րահամ երկրիս վրայ ուր երթալը չէք
գիտեր », սակայն գիտէր որ դէպ ՚ի
երկինք երթալու ճամբուն վրայ էր:
« Անիկա հիմնարկութիւն չ'ունեցող
քաղաք մի կը փնտուէր »: Դէպ ՚ի այն
Մեծ Թագաւորին փառաւոր մայրաւ

(*) Ուիլյամ Քորս Անգլ. Խորհրդարանին անգամ
մի էր, բարեպաշտ, ուղղամիտ և լուսաւորեալ անձ
մի, որ առանձին սիտաւ Արեւմտեան Հնդկաստա-
նի (West Indies) շորս միջոն գերիներու աղատու-
թիւնը պահանջել, ընդդէմ հասարակաց կարծեաց,
ամեն նախատինք, վնաս, ցաւ կրէն քսան տարի
վերջը հասարակաց և Լորտերու Խորհրդարանի ան-
դամաց հաւանութեամբը շորս միջոն գերիները ի-
րենց տերերէն քսան միջոն Անգլ. լիբայի ծախու
առնուեցան Անգլ. կառավարութեան գանձէն:
Ահա այսօր այս գերիներէն շատերը կամ անոնց զա-
ւակները իրենց երկրին մէջ Խորհրդարանի նստա-
գահ անգամ և այլն են:

քաղաքը իր բոլոր թափառմանցը մէջ
իւր աչքերը սեւեռած հաստատած
էր . . . :

Այսպէս մենք ալ պէտք էնք յա
ւաջ չուել օրէ օր, պարտաւորութե
նէ ՚ի պարտաւորութիւն . . . սակայն
քիչ ատենէն « Յաւիտենական փա
ւաց մեծութեանը » : Այն բաւական
է . . . թող փոթորիկները մանչեն, ան
գին զիմացը երկիրքն է : Ի՞նչ հոգ եւ

թէ ճամբան մութ է, երբ միայն կա
րենամ Յիսուսին ձեռքը իմ ձեռքիս
մէջ զգալ և Անոր ըսելը լսեմ. « Ես եմ
մի երկնչիւր, որգեակ իմ, ուր որ ես եմ
գուն ալ հոն պիտի ըլլաս » :

Այս Աստուածային ձայնը հան
դարտութիւն կը բերէ :

« Սիրեցեալն իմն է եւ ես Անորն
եմ » :

D^r Theodore L. Cuyler

Ծ Ա Ղ Կ Ա Ք Ա Ղ Ա Մ Ե Ր Ի Ք Ա Կ Ա Ն

Ք Ր Ի Ս Տ Ո Ս Ա Ռ Ք Ր Ի Ս Տ Ո Ն Ե Ա Յ Ն

« Գինս՝ գործէ իմ այգւոյս մէջ » հոն ընելիք շատ գործ կայ .
Հունձքը շատ է, եւ աշխատաւորները քիչ :
Հոն վնասակար խոտեր շատ կան, այգին անպարհապ է, գէշ տունկեր կան խլուելու
Եւ փոխադարձ հերկելու, սերմանելու և պտուղները քաշելու պէտք կայ :
Աղուէսներ կան բռնուելիք, գայլեր կան ջնջուելիք .
Ամէն հասակի և աստիճանի տէր մարդկանց գործ ունիմ տալիք,
Ոչխարներ ունիմ նայուելիք, եւ գառնուկներ դարմանուելիք .
Կորսուածը պէտք է փնտաել, հաւքել, վհատեալները միխթարել :
Գնա՛ գործէ, գնա՛ գործէ, գնա՛ գործէ իմ այգւոյս մէջ շատ բան կայ ընելիք .
Գնա՛ գործէ, գնա՛ գործէ հունձքը շատ է, և աշխատաւորներն քիչ :
« Գնա՛ գործէ իմ այգւոյս մէջ » ղքեղ իբրեւ իմն կը պահանջեմ,
Արիւնով քեզ ծախու առի և բոլոր քուկդ եղածները .
Քու ժամանակդ և քու տաղանդներդ, քու ամենաբարձր կարողութիւններդ,
Քու ամենաջերմ զգացումներդ և պայծառագոյն ժամերդ :
Ես յօժարութեամբ թողուցի իմ թագաւորութիւնս քեզ համար
Ինչպէս նաեւ Հրեշտակապետաց երգերը – որ ծառին վրայ կախուիմ
Յաւերու եւ փորձութեանց մէջ, վշտոց և ամօթի մէջ,
Քու բուն զինդ և արժէքդ լիովին վճարեցի, իմ ծախու առածս կը պահանջեմ
Գնա՛ գործէ, գնա՛ գործէ, գնա՛ գործէ իմ այգւոյս մէջ շատ բան կայ ընելիք .
Գնա՛ գործէ, գնա՛ գործէ, հունձքը շատ է և աշխատաւորները քիչ :
« Գնա՛ գործէ իմ այգւոյս մէջ » ո՛հ, գործէ քանի որ ցորեկ է,
Արեւին լուսածածանջ ժամերը կըլտասին շուտաշուտ
Եւ գիշերային տխուր ստուերները ժողովուելու վրայ են :